# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ




*Մարզկենտրոնը՝*
ք. Կապան

*Տարածաշրջանները՝*
Կապան,
Գորիս,
Սիսիան,
Մեղրի

*Քաղաքները՝*
Կապան,
Գորիս,
Սիսիան,
Քաջարան,
Մեղրի,
Ագարակ,
Դաստակերտ

| | |
|---|---|
| Տարածքը | 4 506 քառ. կմ/ |
| ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը | 15.1% |
| Համայնքներ, 2016թ. տարեսկզբի դրությամբ | 102 |
| Քաղաքներ | 7 |
| Գյուղեր | 127 |
| Բնակչության թվաքանակը 2016թ. տարեսկզբի դրությամբ | 139.4 հազ. մարդ/ |
| այդ թվում՝ | |
| քաղաքային | 94.0 հազ. մարդ/ |
| գյուղական | 45.4 հազ. մարդ/ |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը | 4.7 % |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը | 67.4 % |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր | 306 905.3 հա/ |
| այդ թվում՝ վարելահողեր | 43 832.9հա/ |

ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Արցախին:

ՀՀ Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ):

Կապան քաղաքից հարավ-արևելք՝ Ծավ գետի ավազանում է գտնվում բնական սոսիների ռելիկտային պուրակը, որը զբաղեցնում է զրեթե 120 հա, մակերեսով 2-րդն է աշխարհում: Այդ եզակի պուրակի որոշ ծառերի տարիքն անցնում է մի քանի հարյուր տարուց, տրամագիծը հասնում է 3 մ-ի, իսկ բարձրությունը՝ 30-35 մ-ի: Այն սահմանակից է «Շիկահող» պետական արգելոցի Մթնաձորի տեղամասին, որը հայտնի է իր կուսական, անխաթար բնությամբ, լանդշաֆտներով և կենդանական աշխարհով: Արգելոցի Շիկահողի տեղամասը գտնվում է քաղաքից 25 կմ հեռավորության վրա: Ունի հազվագյուտ բնություն, թավուտ անտառներ, նեղ կիրճեր, հարուստ կենդանական աշխարհ, տարածքում կան պատմամշակութային հուշարձաններ:

Ողջի գետի աջ ափին, անտառում է գտնվում Վահանավանքը (X-րդ դար)՝ պատմական Սյունիքի հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը, իսկ 25 կմ հեռավորության վրա՝ նեղ կիրճերով, թավուտ անտառներով «Շիկահող» պետական արգելոցը:

Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան

հալոցքաշրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:
Մարզի ամենագրավիչ վայրերից մեկը, հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձան Տաթևի վանական համալիրն է (IX դար), որտեղ 1390-1435 թթ. գործել է Տաթևի նշանավոր համալսարանը:
2010թ.-ին շահագործման է հանձնվել 5.7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար «Տաթևեր» ճոպանուղին (առավելագույն բարձրությունը 380 մ), որն անցնում է Որոտան գետի կիրճով, ձգվում սարերի վրայով և Հալիձոր գյուղից հասնում Տաթևի վանական համալիր:
Որոտանի կիրճում են գտնվում Տաթևի ՀԷԿ-ը՝Որոտանի ՀԷԿ-երի կասկադի առաջնեկը և Շամբի ջրամբարը, որտեղից 18 կմ երկարությամբ թունելով ջուրը հասնում է Տաթևի ՀԷԿ-ի տուրբիններին:
2012թ. գործարկվեց Հին Խնձորեսկի երկու ձորափը (Ղանդունց նովն ու Ներքին թաղը) իրար միացնող իր տեսակի ու չափի մեջ եզակի կախովի կամուրջը: Կամուրջը հսկա ձորի մի ափից մյուսը ձգվում է ավելի քան 160 մետր: Բարձրությունն ամենախոր տեղում 63 մ է: Կամրջի բանուկ զանգվածը կախված է ամուր ու ծիգ ճոպաններից (կախովի կամուրջ), այդ պատճառով էլ քայլելիս կամուրջը ճոճվում է,այդ իսկ պատճառով ժողովուրդն այն ան-վանել է «Ճոճվող կամուրջ»:
Սիսիան քաղաքից 6 կմ հեռավորության վրա է գտնվում Շաքիի ջրվեժը՝ Փոքր Կովկասի լեռների ամենախոշոր ջրվեժը (բարձրությունը 18 մ):
Մարզի պատմամշակութային հուշարձանների մեջ հայտնիներից են «Զորաց քարեր» հուշարձանախումբը, Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Սիսիանի նեոլիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության աշտարակները:
Սիսիան քաղաքից 3.2 կմ դեպի հյուսիս գտնվում է «Զորաց քարեր» հուշարձանախումբը, որը հայտնի է նաև Քարահունջ անունով: Այն մեգալիթյան դարաշրջանի (Ք.ա. II հազարամյակ) ծնունդ է: «Զորաց քարեր»-ը հանդիսանում են աշխարհում հայտնի հնագույն մեգալիթիկ համալիրներից և աստղադիտարաններից մեկը, հնդեվրոպական քաղաքակրթության քարեդարան-վկայարան, որի գաղտնիքները դեռևս բացահայտված չեն գիտության կողմից: Զորաց քարերը հաճախ անվանում են «հայկական Սթոունհենջ»՝ նկատի ունենալով, որ ուսումնասիրողների կարծիքով այստեղ ևս առկա է մեգալիթիկ աստղադիտարան:
ՀՀ Սյունիքի մարզը, զբաղեցնելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակ-ցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:
Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մո-լիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պերլիտի և դիատոմիտների պաշարներ):
Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:
2015թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 13.3 %,
- գյուղատնտեսություն 7.0 %,
- շինարարություն՝ 5.1 %,
- մանրածախ առևտուր՝ 1.2 %,
- ծառայություններ՝ 1.7 %:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:
Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում) մեջ:
Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):
Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինին:
Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրա-պետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:
Կապան քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 42 640 հազ. մարդ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3 201մ), Երևանից 301 կմ հեռավորության վրա: Տնտեսության առաջատար ճյուղն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, կարի, ոչ հանքային շինանյութերի, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և սարքավորանքի արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:
Քաջարան քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 7 061 հազ. մարդ), գտնվում է Երևանից 327 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 25 կմ: ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա

հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա:

Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որում առանձնանում են սննդամթերքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

Գորիս քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 20 342 հազ. մարդ), գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 63 կմ, տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:

Սիսիան քաղաքը (2016թ. տարեսկզբին՝14 856 հազ. մարդ), գտնվում է Երևանից 206 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 110 կմ, տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև սննդամթերքի և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունները:

Դաստակերտ քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 0.3 հազ. մարդ), գտնվում է Երևանից 226 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 130 կմ: Աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

Մեղրի քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 4 542 հազ. մարդ), գտնվում է Երևանից 373 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 75 կմ, տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

Ագարակ քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 4 284 հազ. մարդ), գտնվում է Երևանից 385 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 90 կմ, տնտեսության առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է: Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ագարակում են գտնվում Հայաստան-Իրան սահմանային և մաքսային կետերը:

## ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ




## ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

| | Քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
| Մանրածախ առևտրի օբյեկտներ,ընդամենը | 415 | 383 | 398 | 399 | 415 |
| այդ թվում՝ | | | | | |
| խանութներ | 173 | 167 | 183 | 201 | 226 |
| կրպակներ | 196 | 174 | 168 | 151 | 135 |
| գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ | 1 | - | - | - | - |

| | Քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
| սպառողական ապրանքների շուկաներ | 4 | 4 | 8 | 7 | 7 |
| առևտրի այլ օբյեկտներ | 41 | 38 | 39 | 40 | 47 |

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
| Պետական նախադպրոցական | 50 | 52 | 52 | 51 | 53 |
| Պետական հանրակրթական | 121 | 121 | 121 | 121 | 121 |
| Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 17 | 17 | 17 | 18 | 18 |
| Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական[1] | 3 | 4 | 4 | 4 | 4 |
| Պետական միջին մասնագիտական ուսումնական | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| Պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Ոչ պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 |

## ՔԱՂԱՔՆԵՐ

| Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ* |
|---|---|
| Կապան | 42 640 |
| Գորիս | 20 342 |
| Սիսիան | 14 856 |
| Քաջարան | 7 061 |
| Մեղրի | 4 542 |
| Ագարակ | 4 284 |
| Դաստակերտ | 301 |

## ԳՅՈՒՂԵՐ

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ** |
|---|---|---|
| **Կապանի տարածաշրջան** | | |
| 1. | Ագարակ | 169 |
| 2. | Աղվանի | 78 |
| 3. | Աճանան | 158 |
| 4. | Անտառաշատ | 100 |
| 5. | Առաջաձոր | 145 |
| 6. | Արծվանիկ | 499 |
| 7. | Գեղանուշ | 238 |
| 8. | Գոմարան | 49 |
| 9. | Գեղի | 168 |
| 10. | Գեղավանք | 11 |

[1] Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ** |
|---|---|---|
| 11. | Կարդ | - |
| 12. | Կիցք | - |
| 13. | Վերին Գեղավանք | - |
| 14. | Քարուտ | - |
| 15. | Դավիթ Բեկ | 766 |
| 16. | Եղեգ | 91 |
| 17. | Եղվարդ | 268 |
| 18. | Լեռնաձոր | 662 |
| 19. | Կավճուտ | 75 |
| 20. | Մուսալլամ | 77 |
| 21. | Ներքին Գիրաթաղ | - |
| 22. | Վերին Գիրաթաղ | - |
| 23. | Խդրանց | 53 |
| 24. | Ծավ | 318 |
| 25. | Շիշկերտ | 45 |
| 26. | Կաղնուտ | 116 |
| 27. | Ձորաստան | 58 |
| 28. | Ճակատեն | 130 |
| 29. | Ներքին Խոտանան | 68 |
| 30. | Ներքին Հանդ | 59 |
| 31. | Նորաշենիկ | 89 |
| 32. | Նոր Աստղաբերդ | 35 |
| 33. | Աջաբաջ | 11 |
| 34. | Գետիշեն | 50 |
| 35. | Ոչեթի | - |
| 36. | Շիկահող | 108 |
| 37. | Տրվենանց | 65 |
| 38. | Չափնի | 70 |
| 39. | Սյունիք | 737 |
| 40. | Բարգուշատ | 58 |
| 41. | Դիցմայրի | 72 |
| 42. | Խորձոր | 17 |
| 43. | Սզնակ | 124 |
| 44. | Սրաշեն | 88 |
| 45. | Սևաքար | 94 |
| 46. | Վանեք | 51 |
| 47. | Վարդավանք | 92 |
| 48. | Վերին Խոտանան | 178 |
| 49. | Տանձավեր | 187 |
| 50. | Տավրուս | 76 |
| 51. | Ուժանիս | 83 |
| 52. | Քաջարան | 201 |
| 53. | Օխտար | 70 |
| **Գորիսի տարածաշրջան** | | |
| 1. | Ակներ | 1 247 |
| 2. | Արավուս | 186 |
| 3. | Բարձրավան | 134 |
| 4. | Խնածախ | 854 |

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ** |
|---|---|---|
| 5. | Խնձորեսկ | 2 026 |
| 6. | Խոզնավար | 400 |
| 7. | Խոտ | 879 |
| 8. | Կոռնիձոր | 1 040 |
| 9. | Հալիձոր | 606 |
| 10. | Հարթաշեն | 676 |
| 11. | Հարժիս | 775 |
| 12. | Ներքին Խնձորեսկ | 266 |
| 13. | Շինուհայր | 2 479 |
| 14. | Շուռնուխ | 142 |
| 15. | Աղբուլաղ | - |
| 16. | Վանանդ | - |
| 17. | Ձորակ(Փայտամշակման գ.կ.) | - |
| 18. | Որոտան | 301 |
| 19. | Սվարանց | 288 |
| 20. | Վաղատուր | 398 |
| 21. | Վերիշեն | 2 126 |
| 22. | Տաթև | 830 |
| 23. | Տանձատափ | 103 |
| 24. | Տեղ | 2 287 |
| 25. | Քաշունի | 30 |
| 26. | Քարահունջ | 1 351 |
| 27. | Քարաշեն | 494 |
| **Մեղրու տարածաշրջան** | | |
| 1. | Ալվանք | 293 |
| 2. | Գուդեմնիս | 35 |
| 3. | Լեհվազ | 644 |
| 4. | Լիճք | 114 |
| 5. | Կարճևան | 226 |
| 6. | Կուրիս | 46 |
| 7. | Նռնաձոր | 144 |
| 8. | Շվանիձոր | 278 |
| 9. | Վահրավար | 35 |
| 10. | Վարդանիձոր | 190 |
| 11. | Այգեձոր | 5 |
| 12. | Թխկուտ | 101 |
| 13. | Տաշտուն | 100 |
| **Սիսիանի տարածաշրջան** | | |
| 1. | Ախլաթյան | 544 |
| 2. | Աղիտու | 399 |
| 3. | Անգեղակոթ | 1 701 |
| 4. | Աշոտավան | 635 |
| 5. | Արևիս | 80 |
| 6. | Բալաք | 176 |
| 7. | Բնունիս | 158 |
| 8. | Բռնակոթ | 2 041 |
| 9. | Գետաթաղ | 188 |

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ** |
|---|---|---|
| 10. | Գորայք | 493 |
| 11. | Դարբաս | 685 |
| 12. | Շամբ | 423 |
| 13. | Թանահատ | 35 |
| 14. | Թասիկ | 292 |
| 15. | Իշխանասար | 246 |
| 16. | Լծեն | 94 |
| 17. | Լոր | 335 |
| 18. | Ծղուկ | 373 |
| 19. | Հացավան | 268 |
| 20. | Մուցք | 320 |
| 21. | Նժդեհ | 112 |
| 22. | Ցղունի | 49 |
| 23. | Նորավան | 463 |
| 24. | Շաղատ | 995 |
| 25. | Շաքի | 1 314 |
| 26. | Շենաթաղ | 366 |
| 27. | Որոտան | 296 |
| 28. | Սալվարդ | 243 |
| 29. | Սառնակունք | 504 |
| 30. | Սպանդարյան | 452 |
| 31. | Վաղատին | 671 |
| 32. | Տոլորս | 393 |
| 33. | Տորունիք | 128 |
| 34. | Ույծ | 547 |

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2015թ.

| | Ընդամենը | *նրանցից՝* | |
|---|---|---|---|
| | | կանայք[1] | տղամարդիկ[1] |
| Բնակչությունը, մարդ | 10 000 | 5 099 | 4 901 |
| Ծնվածներ, մարդ | 102 | 49 | 53 |
| Մահացածներ, մարդ | 92 | 44 | 48 |
| Ամուսնություններ | 49 | X | X |
| Ամուսնալուծություններ | 10 | X | X |
| Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝ | | | |
| նախադպրոցական | 306 | 150 | 156 |
| հանրակրթական | 1 178 | 572 | 606 |
| երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 177 | 113 | 64 |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | 26 | 7 | 19 |
| միջին մասնագիտական | 91 | 45 | 46 |
| բարձրագույն մասնագիտական | 141 | 72 | 69 |
| Առողջապահության ոլորտ՝ | | | |
| հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը) | 42 302 | … | … |
| Մարզիկներ, մարդ | 126 | 31 | 95 |

[1] *Ցուցանիշները հաշվարկային են:*

| | Ընդամենը | *նրանցից՝* | |
|---|---|---|---|
| | | կանայք[1] | տղամարդիկ[1] |
| Զբաղվածներ, մարդ | 3 320 | 1 379 | 1 942 |
| նրանցից՝ գիտական հիմնարկներում | - | - | - |
| նրանցից՝ գիտության դոկտոր | - | - | - |
| գիտության թեկնածուներ | - | - | - |
| ուսուցիչներ | 159 | 131 | 28 |
| բժիշկներ | 21 | … | … |
| միջին բուժանձնակազմ | 56 | … | … |
| Գործազուրկներ, մարդ | 618 | 191 | 427 |
| Սոցիալական ապահովության ոլորտ | | | |
| ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ | 1 670 | 987 | 683 |
| աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ | 260 | X | X |
| Հաճախումների քանակը տարվա ընթացքում | | | |
| գրադարան | 25 968 | … | … |
| թատրոն | 2 188 | … | … |
| համերգ | - | - | - |
| թանգարան | 721 | … | … |
| Իրավական ոլորտ | | | |
| հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում | 45 | X | X |
| այդ թվում՝ ոչ մեծ ծանրության | 24 | X | X |
| միջին ծանրության | 13 | X | X |
| ծանր | 7 | X | X |
| առանձնապես ծանր | 0.0 | X | X |